

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Վտանգաւոր խորհրդատուներ. — Ներքին Տե-
ստութիւն. — Դատաւարութիւն. — Երեւանի լուսեր.
— ՍՊԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղնիսան թերակը-
զու հարցը. Արտաքին լուսեր. — Հեռ-Ա.Գ.Ի.Ն.Ն.Ն. —
ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲՈՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Դատական ընկերութիւն.

ՎՏԱՆՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ

«Արձագանք» խմբագրութիւնը իր ար-
բանականութեամբ, որոնց թւում է մի հմուտ
ու ճարտիկ իրաւաբան, յանձն է առել իր
կուսակցական նպատակները համար շարու-
նակ յուզել Արեւմտեան խայտառակ հար-
ցը: Այդ նպատակով պարունակը քողարկ-
վում են ճշմարտութեան ու դէպի եկեղե-
ցու գոյութիւնն ու հաստատութիւնն
ունեցած ջերմ սիրոյ կիզը քողով, ազգային
հաստատութիւնների պաշտպանների դի-
մակ են դնում իրանց երեսին և մի գլուխ
յեղաշրջում են իրողութիւններն ու ճշը-
մարտութիւնը և վերջ ի վերջոյ ջանում
են խորտակել հայոց եկեղեցու դարեւոր
կազմակերպութիւնը:

Իրաւաբան Եւանգելիան այն հրէշաւոր
սովորութեանն է հասնում, որ ուզում է
ընթերցողներին հաւատացնել որ եթէ սի-
նոդին, նոյն իսկ պետական օրէնքի հիման
վրա, վերադարձված է ունենալ «Իստո-
ղութիւն ի վերայ գործառնութեանց
ամենայն ատենի և պաշտօնաւոր անձանց
ստորագրելոց այսմ Սինդոքսի և վերա-
տեսութիւն կարգին կառավարութեան
գոյից Լուսաւորչական եկեղեցեաց հայոց»,
— այդ նշանակում է թէ նոյն սինոդը կա-
րող է կատարելապէս անտես առնել թէ
թեմական առաջնորդների, թէ կոնստան-
թիաների և թէ գլխաւորապէս ժողովրդի

իրաւունքները, կատարելապէս կամայականու-
թեամբ վարվել և եկեղեցու ընտրողական
ժողովրդական իրաւունքի տեղ դնել
անձնական, անկօնտրոյ իրաւունքը:
«Իստողութիւն» և «Վերադարձութիւն»
ունենալ ստորագրելու հաստատութիւնների
վրա չէ նշանակում անտես առնել և
վերացնել նոյն ստորագրելու հաստատու-
թիւնների գործառնութիւններն ու իրա-
ւունքները:

Խորհուրդ ենք տալիս փաստաբան
Եւանգելիանցին փոքր ինչ զգոյշ լինել իր
մեկնութիւններին ու բացատրութիւններին
մէջ և լաւ կշռել իր գործածած բառերի
իմաստը, միամիտ ընթերցողին չը մոլորեց-
նելու համար....

Սակայն Եւանգելիանցին ու նրա նման-
ներին, այսինքն «Արձագանք» շաբաթաթեր-
թի էջերում ապաստան գտած «մեղաւա-
կանների» նպատակը չէ միայն մոլորեցնել
ընթերցողին, բայց այդ վտանգաւոր և վը-
նասակար խորհրդատուների նպատակն է
հաշտութեամբ իրանց դարձնել ազգային
հայոց եկեղեցու կազմակերպութեան նշա-
նակութիւնը, հաւատացնել թէ իրան ե-
կեղեցուն և թէ ժողովրդին որ հայոց ե-
կեղեցուն բարձրագոյն ատենը, սինոդը,
միշտ ունեցել է և ունի անձնական, նոյն
իսկ կամայական ոյժ ու իշխանութիւն և
որ հնադարեան հայոց եկեղեցին իր կազ-
մակերպութեան մէջ երբեք չէ հիմնվել և
չէ հիմնվում միմիայն ընտրողական և
պարզ ժողովրդական սկզբունքների վրա:

Այդ վտանգաւոր և վնասակար խորհր-
դատուների միտումները հասկանալի են....
դա արդէն մեզ ծանօթ է հին երգն է, —
մոլորեցնել իրանց թեմաւոր խորհուրդներով
եկեղեցու ներկայացուցիչներին, նրանց ու
ժողովրդի մէջ ստանութիւն և խորթութիւն
դրելով և հաւատացնելով առաջնորդներին որ
իրանց ոչինչ գործ չունեն ժողովրդական

սկզբունքի հետ և կարող են ինքնազուլու-
խորտակել այդ ժողովրդական սկզբունքը,
որը սակայն (իրանք էլ այդ շատ լաւ գի-
տին) միակ նեցուկ է, միակ պատուանդան
է, միակ պայման է, միակ raison d'être է
մեր եկեղեցու գոյութեան: Առանց ընտրո-
ղական և ժողովրդական սկզբունքի չը կայ
հայոց եկեղեցին, և անտես առնելով կամ
արհամարհելով այդ երկու սկզբունքները,
որոնք նրան անուշ ու կենդանութիւն են
տալիս, որոնք նրա գոյութեան միակ պայ-
մաններն են, — հայոց եկեղեցին կը կորչէր,
կանհետանար, քանի որ մեր պատմական և
հնադարեան եկեղեցին, ինչպէս մի բոյս,
որ չէ կարող ապրել և սնվել առանց պա-
րարտ հողի, ինչքան էլ եկեղեցու դուրսը
բարձր լինէր, նրա արմատները շատ խոր
կերպով մտել, արմատացել են ժողովրդա-
կան հողի մէջ:

Չարամիտ և նենգաւոր խորհրդատուների
նպատակն է ժողովրդական հողի մէջ խոր
արմատներ գցած դարեւոր հիմնարկութիւ-
նը արմատահան անել և դարձնել այդ
հիմնարկութիւնը անհիմն և անհող:

Իսկ մենք, հալածակ այդ վտանգաւոր և
նենգամիտ խորհրդատուների խորհուրդնե-
րին, դիմում ենք մեր եկեղեցու հայրերին
և ասում ենք նրանց. դուք ձեր հիմնար-
կութեամբ մեր արդիւնքն էք, դուք մեր ա-
րիւնն ու մարմինն էք, մի լսէք նենգամիտ
խորհրդատուներին և ընդհակառակն եր-
կու ձեռքով պինդ բռնեցէք ընտրողական
և ժողովրդական սկզբունքները, անկեղծ կեր-
պով յարգեցէք այդ սկզբունքը, առանց որի
դուք գոյութեան մի տը չունէք, առանց
որի դուք անհող բոյսի կը նմանէք, խա-
րխիւր կորցրած փոթորկալի ծովի ալիքնե-
րի կամքին յանձնած անապատաւան նաւի
կը նմանէք:

Հայոց եկեղեցու գոյութիւնը միշտ կախ-
ված է եղել ժողովրդից և այն պատմական

դժբաղդը բազմակերպում ենք նա ուղեցնել է
ժողովրդի կախումից իր բոլոր կապերը
կտրել, նա միշտ սկսել է իր ոտների տակ
հաստատուն հողը կորցնել:

«Արձագանք» արբանեակների պէս
մարդկանց խորհրդները եկեղեցուն կորուստ
են սպառնում, այն եկեղեցուն, որի կեղ-
ծաւոր պաշտպաններն ու պաշտոններն են
յանդգնում հանդիսանալ նրանք, իսկ մեր
տուած խորհուրդը ունի իր պատմական և
տրամաբանական խոր իմաստն ու հիմքը:

Եկեղեցին ոչ թէ միայն չը պէտք է ար-
համարհի, անտես առնի ժողովրդի կամքը,
ոչ թէ միայն չը պէտք է ջանալ, նենգա-
ւոր խորհրդատուների ասածներին հետեւե-
լով, ոտնակոխ անել ժողովրդական սկզբուն-
քը, — այլ պէտք է աւելի և աւելի ոյժ տայ,
պաշտպանի և յարգի այդ ժողովրդական
սկզբունքը, որովհետեւ առանց ժողովրդի
եկեղեցին կորած է, գոյութեան միայն չու-
նի: Գործելով մեզ դէմ, ժողովրդի դէմ,
ընթանալով ժողովրդի կամքի դէմ, եկեղե-
ցին, որը ուրիշ բան չէ եթէ ոչ ազգային,
ժողովրդական հոգեւոր կենսի արտադրու-
թիւն թէ բարոյապէս և թէ նիւթապէս
ու ժառանգաւ կը լինէր:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա, ապրիլի 28-ին

Կարգադիր լրագրի 33 համարում մի նամակ
Ախալցխայից (Ա. Ա.) ստորագրութեամբ, նա-
մակադիրը ի միջ այլոց յարձակվում է ս. փրկիչ
եկեղեցու երեցիներին վրա և ուզում է ստուեր
դրել նրա գործունէութեան վրա: Առանց մանրա-
մասնութիւնների մէջ մտնելու, մատնանիլ անենք

նախկին և խորհրդի նոյն տեսակ շարժողու-
թիւնները, դրութիւնները: Մի և նոյն էր թէ չը
պատմէր էլ, նրանց մէջ մի բան չէ աւելանում և
չէ պակասում: Յիշում են ամեն բան մոռացած:
Մեր ժողովրդի պէս լաւ պատմութիւնների սիրա-
հար են մանաւանդ պոսիցիներ: Թող ու ուզում է
ինչ կարող է պատմել, միայն թէ պղպղդ, բացալս,
մանանիկ շատ լինեն, որ լսողին վառեն, այրեն:
Ես իդուր ասեցի «ով ուզում է»: Պատմողների
վերաբերմամբ ճակատից դուրի չեն պոսիցիներ: Ա-
րաւական, պարսկական, մոնղոլական պատմու-
թիւնները լի են դրգող միջոցների աւելի մեծ
քանակութեամբ: Բայց ամենքս էլ դիտենք, որ
լուսաւորութեան լոյսը Տիբեթից, Կաշգարից կամ
Համադանից չէ գալիս, այդ տեղերում յաւիտե-
ական ծուրութեան մէջ անշարժացած են աղ-
գերը: Ուստի լոյս սիրողները դիմում են փարիզի
բոմաններին:

Գեղարուեստի կողմից Տաճկահայաստանի գրա-
դէտ մասը հոգով ֆրանսիացի է: Եւրոպայի նո-
րաձեռնութիւնների խղճով որդի տիկինը դուցէ
այնքան մոլութիւն ունի դէպի մորֆին, ինչքան
պոսիցիներ է ֆրանսամոլ Տիկինը իր կաշուի տա-
կըն է սրսկում մորֆին, որ դրացմունքներ ունե-
նայ, տպաւորութիւններ ստանայ, անում է այդ
մտքով բայց տեսնում է, որ ամեն տպաւորու-
թիւն, ամեն դրացմունք, աշխոյժ կորցրեց և մը-
նաց իր մոլութեան ձեռքին տանջված: Այդպէս
են և զրաւէր պոսիցիներ, անհամար ֆրանսիական
վէպեր են թարգմանել. կարդում են, որ խիստ
զգացմունք, խիստ խոր, ցնցող տպաւորութիւն
ունենան. բայց վերջը մնում են մնակ իրանց ան-
գուտ մոլութեան հետ: Ես տեսել եմ մի վէպ,
կարծեմ Զմիւռնիա տպված. կարգադիր եմ, ինչ-
պէս և միշտ հաւատացած լինելով, որ դա էլ
թարգմանութիւն է: Բայց տես յառաջաբանը,
այդտեղ հեղինակն ականաջ ցոյց է տալիս, որ
ինքը հայ է և խոստովանում է, որ ինչ ինչ (?)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԸՆԿԵՐԻՍ

Բ

Այս տարի Պոլսի «Արեւել» լրագրի կարգաւոր
ուղարկութիւնս դրանց (Աղբիւր) լուսերից ա-
ռաջ դրած խմբագրութեան ծանուցումը, մեծ
տառերով: Խմբագրութիւնը ծանուցանում էր որ
չորս թէ հինգ օրից յետոյ «Արեւել» թերթը
նում պիտի սկսվի մի նոր վէպի տպագրութիւնը:
Ֆորտիւնէ դը Բուազոբէի «Սիրային ամուսնու-
թիւն» վէպի թարգմանութիւնն էր դա: Խմբա-
գրութիւնը պարտք է համարել նախապէս պատ-
րաստել իր ընթերցողներին այսպէս. «Հանրածա-
նօթ վիպասանին սոյն նորագոյն երկն, որ իբրեւ
թերթին կը հրատարակուի տակաւին ֆիկտաւոր
մէջ, կը նկարագրէ օրուան ծանօթ դէպքեր և
ընթերցողաց երեսակցութիւնը միշտ վառ կը
պահէ իւր ոգևորեալ պատկերներով և հետաքը-
րաշարժ կնճիւղներով: Գետոյ նորոգելով ընթեր-
ցողների յիշողութիւնը նոյն հեղինակի «Լըբըրի
ծերութիւն» վէպի մասին, որ թարգմանել է
Իւթիւճեան էֆէնդին, «Արեւել» յոյս ունէր, որ
«Իր ընթերցողը... անշուշտ նոյն գոհունակու-
թիւնը պիտի զգան սոյն գեղեցիկ վէպէն»:

Այս հանդիսաւոր նախատեսակից յետոյ մի
անգամ էլ երևում է մի ծանուցում և յետոյ վէ-
պը վաղուց սպասած մանաւանդ պէս երևում է
սկսում է թարգմել «Արեւել» մեծ դաշտերի վրա:
Այս եւմածում այդ ահապէս թերթի անկիւնները,
տեսնում եմ, որ կարգաւոր բանը Ֆորտիւնէի
վէպն է: Բայց էլի չեմ կարդում:
Բարեկամ, ինձ շատ իմաստաւոր է երևում մի

ասացումը. «Հասն ուղ է ընկել, կանոն ուղ ես
դու»: Դը-Բուազոբէի անունը — չը դիտեմ քեզ
ինչպէս — ինձ յայտնի է, որովհետեւ կարգացել եմ
«Լըբըրի ծերութիւն» ժամանակ էր, անհաշիւ
վատնեցի, կարգացի լիթէ դու չես կարգացել,
հաւատացի ինձ, որ ասեմ թէ դա աշխարհաճո-
չակ Դեհերազադէի հեթաթմերից մէկի չափ հե-
տաքրքրաշարժ է, բայց և ոչ նրա կէսի չափ ի-
մաստաւոր, փափուկ, տիպական կնճիւղներ, կըն-
ձիւններ.... որքան և կամենաս երեսակցութիւն
վառ, բորբոքված, չափ ու սահման անցած:

— Բայ, ընդհատում ես դու. — հասկացա՛յ ինչի
համար ես բարբառում: Այդ տեսակ բոմաններ
շատ կան մեր մէջ էլ, շատ են կարգացել Մեծ
մեծ գրքեր են, մեծ գնեցող, բայց բարդաւոր մի-
կը մի ֆունտ պանրից էլ է հեման ծախվում:
Ֆորտիւնի կան փողոցային վէպերն են, հեշտու-
թեամբ թխված, ամբողջ առօրեայ տխրութիւնը
փարատելու համար: Ամեն գրականութիւն ունի
թէ փառաւոր զարդարում չէնք և թէ կեղտոտ
բակի: Ֆորտիւնի էֆանդին խոհանոցը տալիս
է ուսուցող խոհանոցի սպասաւորներին, սրանք
թարգմանում են նոյնպէս. բայց ուսանելից շատ
քիչ կը ճարվի մէկը, որ խղճի վրա բար գնէ և
պոսիցիս նախատեսակը կատարէ:

Ճշմարիտ որ այդպէս է: Բայց դու դեռ ինչին
ես տեղեակ: Պոլ-դը-Կոփ, որին Բէլինսկի գինե-
տան գրողների շարքում է դասում, պոսիցիսներ
համար հանձար է և նրան թարգմանում են այն
ժամանակ, երբ հեղինակի անունը իսպառ մո-
ռացվել է, գերեզմանի տեղը կորել: Թարգմանում
են և գովում.... Այսպէս և ամեն մի ձրի հոչակ
ստացած ֆրանսիացու վէպ, որ անչափ հետաքը-
րաշարժ լինելով չունէ և կարում, արիւն է
կանգնեցնում:

Ուղարկութեամբ կարդա «Արեւել» ծանուցու-
մը, բառերը, տառերը քրքրելի, տակն ու վրա
արա, չեն զարմանում: Ամեն ազգի բարեխիղճ

ընտաղատը իրան տուած վէպի մէջ նախ և ա-
ռաջ որոնում է դեղարուեստ, ազա պատկերներ,
տիպեր, իդէալներ, հաշիւ է պահանջում հեղինա-
կից: Պահանջում է, որ նա իր մտաւոր հարցասի-
րութեամբ պաշար տայ, իրան անձանթ աշխարհը
գտնէ, նոր-նոր անյայտ մարդիկ դուրս հանէ,
հանգամանքների, հասարակական հարցերի, բնա-
ւորութիւնների, հասկացողութիւնների ներքին
հանդուցները գտնէ, պարզէ: Իսկ պոսիցիներ.... հե-
տաքրքրաշարժ բաներ են որոնում: Միայն հե-
տաքրքրաշարժ, ուրիշ արժանաւորութիւն գին
չունի, չը կայ: Մեր ժողովուրդը, դեհեթիկ, անզար-
դացած դասն եմ ասում, իր օրերի մէջ ունի պա-
րապ, անպէտք ժամեր, որ շատ ծանր են անց-
նում. ժամեր, երբ յորանջումը, սարսափելի
տաղտկութիւնը դուրս է ցաւեցնում: Այդ ժամե-
րի սպանիչ ծանրութեան դէմ նա ունի պատմու-
թիւններ, պատմում են՝ լուսն, լուսն անօդաւոր,
ինչպէս անօդաւոր են ծանր ժամերը: Հարկը ան-
գամ կրկնվում է մի և նոյն պատմութիւնը, մար-
դը լուսն է թրած, ծուրացած, կողքի վրա ան-
շարժ ընկած: Միայն պատմութեան մի յատկու-
թիւնն է ձգում նրան, հետաքրքրի լինել է դա,
պատմութեան լաւ լինելը: Այդ է պատճառը, որ
ամեն մէկը չէ կարող պատմող դառնալ, պարապ
ուղեղ կաշկանդելու համար հարկաւոր է ծաղ-
կեցնել, շինել, լաւ սարքել պատմութիւնը: Տես-
նում ես մէկը լսեց, լսեց, աչքերը բաց ու խուփ
արաւ, հետդիտեմ կրանում է դէպի գետին, ծա-
նոր ծանր շարժում է դուրսը և այդպէս անխուփ
անպատրաստ քուն մտաւ: Միւսը լսում է և մի
և նոյն ժամանակ ամենայն ուղարկութեամբ դըն-
նում է իր արկաւորի փէշերը, որոնում է չորա-
ցած ցեխի կտոր, որ մատի ծայրով փշրի, բերա-
նով փշի: Իսկ մի ուրիշը երբեմն անողորմ պէս
այնպէս բաց է անում բերանը, յորանջում, որ
ասում ես՝ էլ ծնունդը միմիայն չը պիտի կըպ-
չեն: Պատմողը պատմում է վերջացում, շարու-

միայն մի քանի կէտերի վրա Պ. Նամակագիրը ասում է թէ՛ միմիայն ս. Փրկչի մոմավաճառութեան և դանձանակադրամի արդիւնքը մի քանի հազարներէ է հասնում և այնու Միթէ՛ պ. Նամակագիրն յայտնի չէ քաղաքին ներկայ տնտեսական նեղ դրութիւնը, որի շնորհով տները և անշարժ կալուածքների գները շատ ընկել են առաջվանից, բայց այնու ամենայնիւ ս. Փրկչի եկեղեցու ներկայ երեցփոխանի իրաւանց տակ գտնվող կալուածքները գրեթէ նոյն վարձով են ինչպէս իր նախորդի օրով: Բայց այդ կալուածքները հնացած լինելով՝ արդիւնքի մեծ մասը ծախսվում է դրանց նորոգութեան համար, իսկ հին յաջորդարանը, որ իր նախորդներին օրով վարձով էր տրված, այժմ, վերանորոգվելով՝ օրիորդաց ուսումնարան է դարձել: Գալով գանձանակադրամներին պէտք է ասենք, որ այդտեղ էլ ճշմարտութիւնը խախտված է. գանձանակը ամենայն ժամանակ անխախտ չըլեցնում են, և այդ գործը արդիւնաւոր կերպով առաջ է գնում, և երբեք չէ գտնված գանգատաւոր, որ ասէր թէ մոմ ուղեկիս օրերով ուրում է երեցփոխի ինչու իսկ թէ իրան պ. Նամակագիրն մէկ այդպիսին գանգատվել է, թող ցոյց տայ յականէ անուանէ: Պ. Նամակագիրը երեցփոխանի պատիւը չօչափելով՝ չօչափում է նաև Ախալցխայի հայ հասարակութեան մեծագոյն մասի պատիւը, որը այդ երեցփոխանին բնորոշ է: Այդ նոյն երեցփոխանը երեք անգամ հրաժարական տուեց իր պաշտօնից, բայց երեք անգամն էլ նորից հաստատվեցաւ այդ պաշտօնում, և բաց ճակատով՝ մանրամասն հաշիւ ներկայացրեց հասարակութեան կողմից ընտրված հաշւաւորներին:

Դառնալով պ. Նամակագրի այն խօսքերին թէ կօնսիստօրիայի հրամանի հակառակ, երեցփոխանը չէ յանձնում իր հաշիւները տեղական հոգեւոր կառավարութեան, պէտք է ասենք, որ դրանով նա ցոյց է տալիս, որ ինքը այն մարդկերանցից է, որոնք անձնական շահերի ետեք են ընկած այդպիսի հարցերում: Ատենական գործերն են բողոքում են այդ դրապարտութեան դէմ և ցոյց են տալիս, որ երեցփոխը կօնսիստօրիայի հրամանի համաձայն իր հաշիւները հաշւետետներ ընտրութեան ենթարկվող յետոյ, բոլոր գործերն անխիջապէս յանձնել է հոգ. կառավարութեան: Չը պէտք է մոռանալ և այն, որ ինքը հասարակութիւնը բազմաստորագիր խնդրելով դիմեց նորից վիճ. կօնսիստօրիային, յայտնելով, որ հասարակութիւնը բոլորովին ընդդէմ է երեցփոխանու:

պատճառներով գործող անձինքների անունները ֆրանսերէն է դրել. մի հատ հայկական անուն չը կայ և վէպն էլ, որ «Տօրա» է. անուանվում, հայ կեանքի ոչ մի նշան չունի: Ահա մի փաստ, որ շատ և շատ բան է խօսում: Գրագէտը, որ գրելու պահանջ է զգում, վերցնում է գրիչը և ամենայն հարազատութեամբ ֆրանսիական բոման է գրում հայերէն: Սա մոլութիւնն է, ապա ինչ անուն ունի:

Դու այս խօսքերիս դէմ իրաւունք ունես ասելու թէ ինչ անհեղ, միթէ՛ ֆրանսիական գրականութիւնը բաւական մեծ չէ, որ նրանով գրավեն պոսեցիք:

Ի հարկէ, շատ մեծ է, շատ գեղեցիկ. և ես չնորհակալ արտով պիտի յիշեմ, որ Պօլսը տուել է մեզ վիկտոր Հիւգօի «Թշուառների» թարգմանութիւնը: Ո՛ր էր թէ միտ այսպիսի մեծ գործերի թարգմանութեամբ պարագլին և մոլութեան այն աստիճանին հասնէին, որ ամենին մոռանալին ինքնուրոյն ստեղծագործութեան գաղափարը: Այն ժամանակ զոնէ կասէինք, որ պոսեցիք այնքան կրթել են իրանց ճաշակը, այնքան նուրբ հասկացողութիւն և գնահատութիւն ունեն, որ մեր կուշ եկած մոլորադոյն կեանքը իր հաղիւ նկատելի շարժումներով անկարող է, երևի, գեղարուեստական մեծութիւն արտադրելու: Բայց Հիւգօ, Ֆլորանս, Պօլսը-Կոօ... սա ինչ տեսակ դաստաւորութիւն է. միթէ՛ դրանք որ և է համեմատական գործակալութիւն ունեն միմեանց հետ: Եթէ այդպէս է, ինչու մինչև այժմ Պօլսի հրապարակը չէ դուրս գալիս Զօյա կամ Ալֆօնս Դօդէ, երկու վիպագիրներ, որոնք վիպական նոր ուղղութեան ներկայացուցիչներն են և համակրանք են գտել ամեն տեղ: Լսել ես, որ դրանց մի կամ երկու գործը թարգմանած լինէին պոսեցիք: Գոնէ ինձ յայտնի չէ, ոչ տեսել եմ, ոչ էլ դրանց անուան պատահել գրացուցակների մէջ: Գուցէ մի անելի պաղարեւն էֆէնդի թարգ-

միւնը հոգեւոր կառավարութեան յանձնելուն, և թէ պատրաստ է իր միջոց ընտրել ժամանակին նոր երեցփոխան, թողնելով ներկայ երեցփոխանին վերստին իր պաշտօնի մէջ, ինչպէս և է՛ մինչև այսօր: Պ. յօդուածագիրը գրում է հետեւալ խօսքերը. թէ երեցփոխանը խռովել է եկեղեցուց, ուստ է արած այնտեղ ոտք չը կոխել: Մենք առաջարկում ենք, որ այդ դրապարտական խօսքերը հաստատելու համար օրինաւոր ապացոյցներ ներկայացնէ, ապա թէ ոչ լոկ խօսքերը մի առանձին արժէք չունեն: Ի վերջոյ պ. երեցփոխանի արժանաւորութեան և համակրութեան մի նշան համարվի և այն, որ թեմական առաջնորդ Արքեպիսկոպոսը ինքը բարեհաճեց ուրիշ բաների հետ միասին բանկային տոմսակները թողնել նոյն երեցփոխի մօտ:

Ներքոյ ստորագրութիւններս պատիւ ունենք խնդրելու ձեզ, խմբագիր տէր, որ մեր այս երկտող պատասխանին մի անկիւն չնորէք ձեր լրագրի մէջ՝ ճշմարտութիւնը պաշտպանելու համար:

Ստորագրութիւններ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՍԱՐԻՑ մեզ գրում են: «Մինչև ապրիլի 27 մեզ մօտ եղանակները շատ լու էին, իսկ այդ օրից սկսած զուարթ մառախուղով ծածկվեց և մինչև մայիսի 8 շարունակ անձրև էր տեղում: Ինչպէս պատմում են Ղուբայ-Գերբէնտի ճանապարհի միջով հոտող Սամուր կոչված գետում ջուրը այնքան աւելացել է, որ ճանապարհով անցնելը բոլորովին հնար չը կայ: Տեղի են ունեցել մի քանի անբարդութիւններ զուարթի ուսու սայլապանների հետ: Տեղացիք վկայում են որ 1876 թիւը յետոյ, այսինքն 12 տարվայ ընթացքում, Սամուր գետում այդքան քանակութեամբ ջուր չեն տեսել:»

Մեզ գրում են ԱՍԽԱՅԻՍԻՑԻՑ որ Նկարիչ Առաքել Սահյանն, որը երբեքն Նկարչութեան ուսուցիչ էր Գեորգեան ճեմարանում, և որի պատկերները «Սեանի լիճ» և «Աղթամարի լիճ» արդէն յայտնի են, պատրաստում է այժմ մի նոր նկարը, որ ներկայացնում է Վարդանանց պատերազմը: Աւարայրի դաշտում:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Սրանից մի քանի ժամանակ առաջ Բուդաղեան եղբայրները նուրում են Շամախու թեմում գտնվող Սաղանի

մանել է, բայց ով գիտէ որ անկիւնում է ընկած թարգմանութիւնը: Եւ ինչպէս կարող է տարածվել Զօյայ պէս մի սառն ընդգծել նկարագրական պարզ գրութեամբ մի դասակարգի մէջ, որ սովորել է սիրել մրրիկի արագութեամբ անցնող, խայտաբղետ տեսարաններ, անցքեր, ինտրիգաներ: Զաշակի բան է, բարեկամ, ճաշակի և անխորժակի հետ, ասած է, ընկերանալ չես կարող: Եւ այսպէս ահա գեղարուեստի մուրացկանութիւն ենք տեսնում Պօլսեցիք մուրում ե՛ր այն, ինչ հնչողութեամբ է ձգրվում և հանդիստ խընով, նախաածանակների օգնութեամբ տարածում են իրանց մուրացանքը, տարածում են այն մեծ, լայնատարած գաւառներում, ուր հնութեան խաւարի մէջ նստած ժողովուրդը ֆրանսիականին սովորեց առաջ կարօտութիւն ունի իր սեփական մտաւորին: Կայ մուրացկանների երկու տեսակ: Մէկը մուրում է, որովհետեւ անգամաւոր է, իսկ որ յարմար է անքորինք աշխատութեամբ ապրելու: Միւսը, ընդհանրապէս, մուրում է, որովհետեւ արհեստ է շինել ծուլութիւնը և ուրիշին ձեռք մեկնելու: Տեսնում ես, փողոցում առաջ է գալիս առողջ, ուժեղ մարդ, զօռով ձեւանում է հաշմ, անկարող, կզակ կախ է գցում, դուխը ձուռն, ձեռքը մինչև քիթը մեկնում: Ո՛ր տեսակ մուրացկաններից են պոսեցիք: Պատասխանելու էլ կարող ես. իսկ ես նիւթ կը տամ այդ մասին:

Պօլսեցիք միշտ, ամեն դիպուածում սէր են քարոզում... Մեր, սովորների և վարդերի արհեստ... Իսկ եթէ հազարից մի անգամ մի փորձի պատկեր կը գրեն առանց սիրային ցաւ ու կրակի, անպատճառ պէտք է մի որ և է փոսած տէնդէնցիա խրեն մէջտեղ: Գլխաւորապէս սիրում են խրատական քարոզներ տալ: Խրատ առանց օրինակի, անկենդան խրատ, որ չէ բըղլում սիրող սրտի խորքից և չունի կեանքի, իրականութեան պէս մաքուր ճշմարտութիւն, այլ

վանքին 10,000 ր. այն պայմանով, որ նրանով բաց անեն յիշեալ վանքում մի դպրոց, որի նպատակը կը լինի պատրաստել չրջակայ գիւղերի համար քահանայացուներ: Գպրոցի բացման համար առաջնորդը ստացել է կաթողիկոսի թույլտուութիւնը: Գպրոցը կը լինի երկդասեան: Այս օրերս դրա կանոնադրութիւնը սրբազանը ցոյց էր տուել դպրոցական դործի հետ ծանօթ մի քանի անձանց և կամեցել է իմանալ նրանց կարծիքը, որպէս զի հարկաւոր փոփոխութիւնները մտցնի կանոնադրութեան մէջ, նախօրէն խնդրելով ունեից հարկն է թույլտուութիւն Ոմանք խորհուրդ են տալիս, որ բացի երկդասեան դպրոցի դասընթացից լաւ կը լինի, որ քահանայացուները մի երկու տարի ևս մնային վանքում, որպէս զի լսեն կրօնական դասեր և վարժվեն եկեղեցական արարողութիւնների և ծէսերի մէջ: Լուսմ ենք որ սրբազանը հաւանութիւն է տուել այդ մտքին: Այդ դպրոցը կը լինի մի տեսակ կենտրոնական դպրոց չրջակայ գիւղերի համար:»

Գաւառական մի քանի քաղաքներից մեզ գրում են, որ հայոց դպրոցների ուսուցչական խմբերին «Արարատ» ամսագրի խմբագրութիւնը ստիպմամբ ուղարկում է իր ամսագիրը: «Արարատ» պարաւար է ստանալ դպրոցի իւրաքանչիւր ուսուցիչ, առանց բացառութեան, չը նայելով որ այս կամ այն դպրոցում ծառայելիս լինեն որպէս ուսուցիչներ երկու եղբայրներ, կամ որպէս ուսուցիչ և վարժուհի մարդ և կին, եղբայր և քույր... Նրանցից իւրաքանչիւրը պարտաւոր է ստանալ «Արարատ» մի մի օրինակ: Այդպիսով մի ընտանիկում ստիպված են շատ անգամ երկու, երեք օրինակ մի և նոյն ամսագրից ստանալ: Մի և նոյն ժամանակ հրամայված է դպրոցների հոգաբարձութիւններին, որ իւրաքանչիւր ուսուցչի և վարժուհու ռոճիկից անմիջապէս կտրեն չորս չորս թուրքի, որպէս «Արարատ» ամսագրի տարեկան գինը, և արդէն մի քանի դպրոցների հոգաբարձուները կտրել են ուսուցիչներին ամսաւայ ռոճիկից այդ 4 թուրքին: Իսկ երբ որ ուսուցիչը հրաժարվում է վճարել այդ 4 թուրքին, հոգաբարձութիւնը սպառնում է նրան զրկել ուսուցչական պաշտօնից:»

ՄԵՂՐԻՑԻՑ մեզ գրում են: «Մեզանում դարունը սովորականից վաղ էր սկսել և չերամի որդները սովորական ժամանակից առաջ դուրս էին եկել սերմից: Սակայն վերջին օրերի ցրտերը և այժ-

ղօռով, անհաւատալի, անկարելի կապերով, ամեն տեսակ բարձր և ցած գոյներով ծեփած խրատ: Դու, սիրելիս, շատ էիր նկատողութիւն առնում, որ ես խիստ եմ խօսում, ծայրին եմ խըփում: Զճմարիտ է արդեօք Միթէ՛ ասածներս խիստ են Պօլսի զրագէտ դասի համար: Այդ ամիս, տես: Երեք հարիւր հազար հայեր են ապրում Պօլսում. նա հայերի համար մի մեծ գաղթավայր է. իրեն մայրաքաղաք ունի հրէշաւոր դաղանի անկուշտ, անտակ բերան, որ ամեն օր գաւառների խորքերից մարդիկ է ձգում դէպի իրան, կլանում: Միթէ՛ այդքան ժողովուրդը, այդ գնալ գալը, այդ միջազգային մեծ կենտրոնի ժխտում տարուբերվող հայութիւնը չունի իր սեփական դէմքը, կեանքը, չունի չար ու բարի մտքեր, գործեր, պատկերներ. և միթէ՛ այդ ահագին բազմութիւնը միայն և եթ կարօտում է սիրային վէպերի և Փարիզի ութօ տուած, յղկած, լպտած տափակ զգացմունքներին: Ի՛նչ ես կարծում եմ: Զեռու տեղերում նստած, մենք հոգով մանում ենք այդ չրջանի մէջ, աշխատում ենք դէմ երևակայութեամբ, գէթ թոյլ ու աղօտ հասկացողութիւնները կապկապելով մի պատկեր կազմել: Քեզ օրինակ լինի Բաֆֆիի «Վարիւր Մշնցին»: Բայց իրանք պոսեցիք ինչ են անում, իրանց քիթի տակ, իրանց չորքը, գլխի վրա, իրանց ամբողջ գոյութեան միջով անցնող գործունէութեան, եռացման, փրփրման հետ ինչպէս են վարվում:

Վանքի լին
Վնի յի յերկին...

Երգում է Գրաւոր Ատուր Ահա չինում եմ պոսեցիքների վէպից մի կտոր. «Բոյր ծաղկանց գեղգեղանք սոխակի, վարդենիք մշտածածաղ, այլ և մշտաբորբոք, Վասֆոր իւր բոսորային ալեօք, կապոյտ երկնակամար մը զՏօրա յերկրէս կը վերացունէին. գինքն կը ձօնէր սիրոյ, փափկութեան, հնչտախրութեան: Ահն ի դարաստան, հոգի ի յեթերս: Ես ինքն յօրինեցի այս կտորը:

մեան փոփոխական եղանակը բաւական վնաս հասցրին չերամի որդներին:»

Մեզ գրում են ՄԵՂՐԻՑԻՑ որ ապրիլ ամսի վերջին օրերում եկած յորդ անձրևներից Միգրիի գետը հեղեղեց դաշտերը և բաւական զնաւներ հասցրեց բամբակի արտերին: Գիւղացու դրութիւնը այնպէս էլ նախանձելի չէ, բայց երբ սովորական անաշողութիւններին միանում է և բնութեան որ և է աղէտ, այն ժամանակ աւելի էլ վատթարանում է գիւղացու ողբալի վիճակը:

Մեզ հաղորդում են որ Ղուբայի գաւառում կրկին երեկեցաւ աւազակների մի խումբ, տեղացի թուրքերից բաղկացած, որին միացան Սիբիրից փախած մի քանի յանցաւորներ: Այդ աւազակների խումբը կողոպտում է ճանապարհորդներին և մայիսի 9-ին Ղուբայի ճանապարհի վրա, Ղուսարից 2 մղոն հեռավորութեամբ, ութ հոգի զինաւորված աւազակներ կողոպտեցին երկու հրէայ գորգավաճառներին, իսկ այնուհետեւ կողոպտեցին 3 հոգի տեղացի թուրք մասվաճառներին:

ԲԱԳՈՒԻՑ գրում են մեզ. «Անսովոր մահերը շարունակ հետևում են միմեանց: Մի քանի օր առաջ մի թուրք մշակ նաւթի մի գործարանում այրվեց, մի ուրիշը նոյնպէս այրվելով՝ վտանգաւոր կերպով վիրաւորվեց: Երկու օր առաջ մի հայի գործարանում հրացանով սպանվեց մի գերմանացի մեքենավար: Իսկ մի քանի օր առաջ չարագործները մի թուրք հայիկին սպանելով, նրա դիակը քաղաքում մաս մաս կտորելով, չուալով տանում են և Սև քաղաքի կէս ճանապարհին թաղում: Բայց հետքը գտնելով, կանխածում և բռնում են մի պարսկահպատակ ջրկիրին, որի ախտատանը կատարված է լինում երեւոյնագործութիւնը: Զրկիրը անմիջապէս ձերբակալվում է, իսկ նրա համախոհ երեք պարսիկներին յոյս կայ չուտով գտնելու:»

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ. «Նիքաի օր, մայիսի 8-ին Ս. Լուսաւորիչ եկեղեցում կատարվեց Բաֆֆիի հոգեհանգիստը: Եկեղեցին և բազը լի էին հասարակութեամբ: Պատարագին երգում էր Կարա-Մուրադայի խումբը, Բագուի հասարակութեան բոլոր չրջանների ներկայացուցիչները շտապել էին ներկայ լինել հոգեհանգստին, արտայայտելու իրանց յարգանքը դէպի հանգուցեալ վիպասանը: Մեր եկեղեցիներում սովորաբար «Հայր

կարճը ես ասել թէ նմանութիւն չունի պոսեցից վէպերին: Եւ, դու, միւսը կարող ենք մեր տնեւում նստած այս տեսակ վէպեր գրել: Իսկ եթէ կը կամենաս իմանալ թէ ինչպէս—ահա հրահանգը: Վեր առ պատարայի, անհատում նիւթը—սէր, կապիր նրան որ և է անցքի հետ, խօսիր վերաւորական լեզուով, Աստուծով հինգ օրում վէպը պատրաստ կը լինի: Վէպը տեղական, մասնաւոր ոչինչ չունի. հողին, ընակարանին չէ դիպչում, մարդու պատկերն է տեսնում, մարդու սրտի մի զգացումն է արհեստական կերպով ստեղծում: Աշխարհաքաղաքացի են, կոսմոպոլիտ... Խօսեցնեն, պոսեցում, պատասխանը պատրաստ է:

Ես քեզ ասում էի որ հայերի մէջ ընդանաւատութիւնը ամենամատուցի բանն է: Պօլսեցու գործը ընում ես, նա պատասխանում է թէ դու էլ պակասութիւններ ունես... Զրաշալի տրամաբանութիւն: Մեզ մօտ պատմում են պարսիկ գինաւորի կտրուկ պատասխանի մասին: Սպան հրամայում է ծոյլ, ոտաբորիկ գինաւոր Մաշադի-Աբասին, որ չարքի մէջ ուղիղ կանգնէ, ոտը ծուռ չը դնէ:

—Ինչու, պատասխանում է շատերի յոյս գինաւորը իր հրամանատարին.—ասա որ Հաջի-Ջափաւը ոտն ուղիղ դնէ, ես էլ կը դնեմ:

Պօլսեցու պատասխանն է թէ՛ ոչ, բարեկամ: Վարը եթէ մի ֆրանսիացի նոյն դիտողութիւնն անի, պէտք է պատասխանեն թէ դուք շատ լաւ մարդիկ էք, այդ ինչեր էք անում ձեր երկրում. կռիւ, իրարանցում, չէք ամաչում:

Ես էլ պիտի խօսեմ պոլսեցիների մասին, երբ մեր կողմերը կանցնեն: Բայց նամակս երկարացաւ Յոսեփիւն: Շուտով էլի կը գրեմ:

մերից» առաջ են ասում ասորի և հանդէսներին յարմար քաղաքները Բայց մեծ եղաւ հասարակութեան զարմանքը, երբ այդ օրը հակառակ իր սպասածի, անցաւ Հայր մերը և մեր բանահայրներին ոչ ոք մի բան չասեց: Այդ լաւ տպաւորութիւնն չի թողնել: Պատարագին ներկայ էր Շամախու թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսը, որը պատարագը վերջանալուց յետոյ աւելորդ չը համարեց մի բան ասելու չա գիմաց ժողովրդին, և միայն հետեւեալն ասեց. «Բազում երկոտաւորները խնդրեցին, որ մէկ հոգեհանգիստ կատարենք Յակովբ Մելիք-Յակովբեանի համար, սա մէկ գիտական գրող է եղել և երկոտաւորներին համար լաւ բաներ է գրել. ահա այսօր նրա հոգեհանգիստն է»: Գրանով էլ վերջացաւ քարոզը: Պատարագից յետոյ այստեղ կազմեալ «Բաժնիկի» հեղինակութիւնները հրատարակելուն և արժան տարածելուն նպատակով յանձնաժողովին կողմից հրաւիրեալ մի քանի երկոտաւորներ և օրիորդներ ժողովեցան խորհրդակցելու համար թէ արդեօք ինչ միջոցներով պէտք է դիմել այդպիսի մի գործ գլուխ բերելու համար: Վճռվեց յանձնարարել պ. Ն. Արեւիկային, որ նա դիմէ Բաժնիկի այրին, բանակցելու համար, թէ ինչ պայմաններով արդեօք նա համաձայն կը լինի, իր ամուսնու անտիպ և տպւած գրականները հրատարակելու իրաւունքը տալու այդ յանձնաժողովին: Երբ այդ մասին որոշ տեղեկութիւններ կը լինեն, կը շտապենք հաղորդել:

Մեր լրագրի անցեալ համարներէն մէկի մէջ տպւած էր մի լուր, որի մէջ ցոյց տալով քաղաքային վարչութեան ղեկի քաղաքի շահերը ունեցած անտարբերութիւնը, յայտնուեալ էր, որ Թիֆլիսի սեփականատէրերը չյափշտակում են ամբողջ փողոցները և միայն իր անցնող բնակարաններին, իսկ վերջումն էլ աւելացրած էր թէ՛ «արդեօք այդ իրողութիւնը յայտնի է քաղաքային վարչութեանը»: Այժմ այդ բանը կարող է շատերի զարմանքը չարեւել: Երևաց որ մինչև այժմ մեր քաղաքի վարչակարանը յայտնի չէր, որ Օլրաժակայան և Գալի-գոլակայան փողոցներին մէջտեղը գտնուող փողոցի երկու ծայրերից էլ քաղաքի սեփականատէրերից մէկը տախտակել է և միացրել իր բնակարանին, և այդ երկու փողոցներին միմեանց հետ ունեցած հնչող հարգաբանութիւնը բոլորովին խափանել է: Մեր քաղաքի վարչակարանը ստիպեցան միայն այն ժամանակ, երբ այդ բանը յայտնվեց լրագրութեան մէջ: Գործնից յետոյ նորա ղեկին օրէնքին, և ամսին 14-ին Թիֆլիսի առաջին քաղաքապետի հաշտարար դատարանը, ոստիկանական պաշտօնեաների և քաղաքային վարչութեան շահերը պաշտպանող փաստաբանի հետ գնացին այդ յափշտակութիւնը կատարեալ տեղը և մասնաւորապէս արձանագրութիւն կազմեցին, որով այդ յափշտակելի սեփականատէրը պէտք է դատի ենթարկուի: Վերջինս յայտնեց, որ այդ փողոցով երկու կողմը նա տախտակով կտրել է վերջին հեղեղի պատճառով, որ ջուրը փողոցը չանցնէ, բայց ինչպէս յայտնի է Վճռակի մէջ տպւած լուրից, այդ փողոցը յափշտակվել է ոչ թէ վերջին ժամանակներս պատահած հեղեղի ժամանակ, այլ նրանից շատ առաջ, այն է մեծ պահլն: Վերջապէս միթէ հեղեղի երկուցից պէտք է բոլոր փողոցների հարգաբանութիւնը տախտակով կտրեն ջուրը փողոցը չը թափվելու համար: Գէթ սրանից յետոյ քաղաքային վարչութիւնը աւելի ուշադրութեամբ հետեւեց այդպիսի անկանոն իրողութիւններին:

Ինչպէս երևում է, մայրաքաղաքի լրագիրներին մի քանի ժամանակ առաջ հաղորդած լուրը թէ յայտնի ռուս ճանապարհորդ Ն. Պրոքորովի շուտով պէտք է ուղևորվի Փոքր-Ասիա, ճիշդ չէ. Ինչպէս արդէն յայտնի է Պրոքորովի պէտք է ճանապարհորդէ կենտրոնական լեռնոտ Ասիայում:

Կ. Պոլսից ստացանք հետեւեալ տեղեկութիւնները. «Քաղաքական ժողովը խորհեց կառավարութեան պէտք եղած ղեկավարներ ընտելու, որպէս ղեկ Գարուսթեան պատրիարք շուտով Երուսաղէմի պատրիարք հաստատուի: Այժմ կը յուսացուի, որ 15—20 աւուրց մէջ թերեւ այդ խնդրը վերջանայ. տեղապահ պիտի ընտրվի նախ. կարելի է տեղապահ ընտրուի Սրբաձեռնեանց Գարեգին եպիսկոպոս. կըսուի թէ նա զուցէ Խզմէրի առաջնորդը ընտրուի»:

Մեզ խնդրում են հաղորդել, որ կիրակի, մայիսի 15-ին, քաղաքային թատրոնում նշանակված վրացիներն ներկայացումը յետաձգվել է մինչև չորեքշաբթի մայիսի 18-ը. կը խաղան Յագարելու գրած նոր դրաման «Յիմբիլի» (Տաժանակիր աշխատանքներին դատապարտված) անունով: Ներկայացման կը մասնակցեն վրաց խմբի ամենաբարձր անդամները:

Դուբայից մեզ գրում են, որ քանի մի օր շաբաթական այնտեղ անձրևներ էին տեղում: Այժմ պարզ եղանակ է անում և յոյս կայ որ այս տարի ցանքերը բարեբեր լինեն:

Հիւսիսային Արմենիայի մեզ գրում են որ, այդ քաղաքին շրջակայ մի քանի գիւղերի այգիները մեծ վնաս կրեցին նորբուսն եղած անձրևախառն կարկուտից: Մասնաւոր վնասված են թուրքերի այգիները:

Մայիսի 15-ին, Ալեքսանդրեան այգիում, յօգուտ ու Նուռէի օրիորդաց դպրոցի կայացրած զբոսանքը և վիճակախաղը շաջողվեց անձրևային եղանակի շնորհով:

Բաժնիկի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու առաջարկութիւնը, որ մենք արեցինք, արդէն ոչ թէ միայն համակրութիւն է գտել, այլ նոյն իսկ շատ տեղերում սկսել են հանգանակութիւն անել: Հասարակութիւնը համակրութեամբ է վերաբերվում ղեկի այդ հանգանակութեան գործը, և զուցէ շատ շուտով կարող կը լինենք հանգուցեալ գրողի գերեզմանը դարձաւ մի վայելուչ արձանով: Այդ արձանի օգտին Թիֆլիսի միջնակարգ դպրոցների հայ աշակերտներից մինք ստացանք 5 ռուբլի:

Մայիսի 14-ին գումարվեց Թիֆլիսի ազնւականների կառավարական բանկի անդամների ընդհանուր ժողովը: Կարգացվեց բանկի 1887 թվ. հաշի վերաբերեալ ղեկուցումը, որը առաջ բերեց հաշիի աղմուկ, ղլխաւորապէս այն պատճառով, որ բանկի վարչութիւնը նախկին Արծրունու թատրոնը և գալլերեան վերանորոգելու համար, բացի ընդհանուր ժողովի կողմից որոշած 30 հազարից, ծախսել է աւելի քան 80 հազար ռուբլի: Ժողովը ձայների առաւելութեամբ վճռեց չը հաստատել հաշիւը, մինչև որ չը կարգացվի յիշեալ շինութեան վերանորոգութեան վերաբերեալ ղեկուցումը:

Մեզ ուղարկված է պ. Ն. Սիմոնեանի հրատարակութեամբ այս օրերս Թիֆլիսում լոյս տեսած Վ. Մատթեանի «Մատթի կտակ» վերնագրով մի նոր վոլըմը, որը քաղկացած է մի գործողութիւնից: Վոլըմի մէջ գտնու է բերված Երեւանի բարբառով մի ժլատի տիպը. այդ տիպը այնքան էլ անաշուղ չէ, բայց վոլըմի այն մասը, որը շատ նման է Վայ իմ կորած յիսուն ոսկի» վոլըմիին, և որը հիմնված է ժլատի նախապաշարված լինելու վրա, ընդհանրապէս թուլացնում է գրութեան արժէքը, որի մէջ կան մի քանի շատ անշուղ սրամտութիւններ:

Անձրևների պատճառով կուր դետի ջուրը անդադար աւելանում է, մասնաւորապէս երեկ գիւղերվանից սկսած, գետի ջուրը բարձրացել էր այնպէս որ Սաղի փողոցներից մի քանիսը ջրով ծածկված են, և մի քանի տեղ էլ նաւակներով են մանգալիս: Գետը շատ փայտեր և գերաններ է բերում. զանազան գերաններ բերելուց յետոյ, երեկ ջուրը պոկել է երեք ջրաղաց իր ամբարներով և ինչպէս մեզ հաղորդում են ակահատեսները, անշուստ բերում էր ղեկով Հաւաքարի կամուրջը. կամուրջի վրա հաւաքված ժողովուրդը երկուցից ցրվեց, կարծելով որ ահա կը դիպչի կամուրջին և նրան էլ կը վնասի: Վերջապէս ջրի վրա լողացող ջրաղացները հասան կամուրջին, դիպչելով նրան ու մաս մաս փլուզվում: Երեւոյն թնդիւններ էին արձակում: Ուսմանը ենթարկում են որ մինչև անգամ ջրաղացների մէջ մարդիկ են եղել, բայց այդ ճիշտ չը պէտք է լինի: Մարդիկ չեն բացնում, բայց ամբարներից անդադար աւելի էր թափվում ջրի մէջ: Կամուրջը բոլորովին անշուստ է: Գետի ջուրը պակասում է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԿԱՆԵԱՆ ԹԵՄԱԿԱՂՋՈՒ ՀԱՐՁ

Վերջին այն հեռագիրները, որոնք վերաբերում են Բալկանեան թերակղզուն, աւելի քան ուշադրութեան արժանի են, և ցոյց են տալիս, թէ ինչպէս մի կողմից քաղաքական շարժումները այդ թերակղզու վրա սաստկանում են, իսկ միւս կողմից մի քանի եւրոպական պետութիւնների, մասնաւորապէս Աւստրիայի, յարաբերութիւնը այդ երկրի հետ աւելի սերտ է կապվում: Չնայ խօսուած Սերբիայի և Բոլգարիայի մասին. մի կողմ ենթ թողնում նոյնպէս և Բուլղարիայի ձգտումները, վերջինները միայն Մակեդոնիան, ուր այժմ խիստ պրոպագանդա է լինում, և տիրապետող քաղաքական յուզումներն պատճառով անխուսափելի է դառնում եւրոպական մեծ պետութիւնների միջամտութիւնը. իսկ այդ միջամտութիւնը ամենայն հեշտութեամբ կարող է առաջ բերել քաղաքական փոփոխութիւններ Բալկանի վրա, որի հարցը աւելի և աւելի է դառնում աւստրիական դիպլոմատներին: Արդէն Վիեննայից մինչև Սալոնիկ երկաթուղու ուղիով յարաբերութիւն է սկսած, որը մեծ նշանակութիւն կունենայ, անկասկած, Աւստրիայի ազդեցութեան գործի համար, թէ քաղաքական և թէ նոյն իսկ տնտեսական տեսակետից: Տնտեսական ենթաստի, որովհետև Աւստրիայի ձգտումների գլխաւոր հիմքը այն տնտեսական հարցն է, որ կապված է Բալկանի հետ, և որը թեւադրում է Աւստրիային մօտեանալ Միջերկրական ծովին և բաց անել արեւելքում շուկաներ՝ աւստրիական արդիւնաբերութիւնը արեւելքում սաղացնելու համար. և այդ մեծ պահանջին լուծիւն տալու համար է այժմ աշխատում Աւստրիան, գործ դնելով իր ամբողջ ուժը, որպէս զի Բալկանի վրա գերիշխանութիւն ստանայ: Պէտք է նկատել, որ այդ գործը աշուղ կերպով է առաջ դնում, քանի որ Աւստրիան՝ յենվելով Գերմանիայի դաշնակցութեան վրա, աւելի համարձակութեամբ է գործում Բալկանի վրա, և չը նայելով մի քանի բարդ հանգամանքներին, յետ չէ կանգնում իր ուղղութիւնից, համարված լինելով, որ Գերմանիայի դաշնակցութիւնը շատ ամուր է, և գերմանական կառավարութիւնը նոյն իսկ իր կենսական շահերի համար ոչ թէ միայն չի ջանքեր աստուր-գերմանական դաշնակցութիւնը, այլ մինչև անգամ հարկաւոր դէպքում գործնական օգնութիւն ցոյց էր տայ Աւստրիային՝ վերջինի քաղաքական ձգտումները Բալկանի վրա իրականացնելու համար. և ահա թէ ինչպէս համար Բալկանեան թերակղզու հարցը քանի դնում, այնքան էլ սուր կերպարանք է ստանում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կիսապաշտօնական «Pesther Lloyd» լրագիրը, ի նկատի ունենալով քաղաքական այժմանը, զուրկութիւնը, խորհուրդ է տալիս Աւստրիային միշտ պատրաստ լինել հարկաւոր դէպքում ասպաբէզ գուրս գալու համար: —Հոսմից գրում են, որ պայքը պատրաստվում է որոշ դիրք բռնելու. ղեկի իտալական կառավարութիւնը, և պատրաստում է մի ծրագիր, որը պէտք է հիմն լինի Վատիկանի և կառավարութեան յարաբերութիւնների համար: Այդ նոր ծրագրով Վատիկանը ձգտում է աւելի ընդարձակել իր իրաւունքները Գայտիէ և արդէն, որ իտալական կառավարութիւնը տրամադրութիւն անգամ չունի Վատիկանին որ և է նոր իրաւունք տալու: —Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքաց կառավարչական շրջաններում զոհ չեն, որ Նիշը և Սալոնիկը միացվեցան երկաթուղու գծով: Այդ դժգոհութեան պատճառը հասկանալի է: —Ֆրանսիայի միապետականները չեն դադարում միապետական դահի մասին երազելուց. Բրիտանիան էլ ի նոր ժողովներ պէտք է լինեն Վոլիտոր-Նապոլէոնի նախագահութեամբ և ներկայութեամբ Փարիզից եկող շատ բոնապարտիստների: Միապետականները ստիպված են ուրիշ միջոցներ դիմելու, որովհետև համոզվում են, որ Բուլղարիան համար շատ էլ նպատակաւոր գործիչ չէ, քանի որ այդ քաղաքական-քաղաքականը արդէն կորցրեց իր արհեստական փայլը և արժէքը և շուտով զուցէ միայն հեղեղութեան և ծաղրական թերթերի նիւթ կը դառնայ, և ուրիշ ոչինչ:

—Չինուորական ուժը մեծացնելու խնդիրը չերմ կերպով արժարվում է Մեծ-Բրիտանիայում. կառավարութիւնը նոր փոխառութիւն է ուղղում անել այդ նպատակի համար. որոշված է աւելի ամրացնել մի քանի նշանաւոր նաւահանգիստներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄՈՒՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԼՈՅԴ, 13 մայիսի Հրատարակված է հետեւեալ Բարձրագոյն հրամանը. վերացնել պալատի միջնորդութեան ղեկաւորութեան և թողնելով այդ միջնորդութեան հսկողութեան ներքոյ յատկապէս վերաբնական պարտաւորութիւնները, այդ բաժնում կատարվող կառավարչական և տնտեսական մասի բոլոր գործերը միացնել մեր դիւանատան վարչութեան պարագմունքներին, հիմնելով այդ հաստատութեան մէջ հետեւեալ բաժինները՝ վարչական, տնտեսական, հողային-գործարանական, ժողովրդագրական, պալատի միջնորդի գլխաւոր ղեկավարութեան տակ, կառավարչի հսկողութեան ներքոյ Հրատարակված է պետական խորհրդի Բարձրագոյն հաստատված կարծիքը օրէնքների հաւաքածուի I մ., II հատ. 375 յօդուածի, որը վերաբերում է այն հարցին, թէ քարոզիչը թնչ դէպքերում պէտք է հրաժարվի իր պաշտօնից:

ՏԱՇԿԷՆՏ, 13 մայիսի Թուրքիստանում թէյի առևտուրը մրցումից պաշտպանելու համար կարգադրված է, որ Թուրքիստանի մաքսատներում գրոշմի անգլո-հնդկական թէյը, որը բերվում է ռուս-ազանական սահմանով, այլ և այն թէյը՝ որը գտնվում է արդէն քաղաքային առևտրական պահեստներում:

ՎԻԵՆՆԱ, 13 մայիսի «Pesther Lloyd» լրագիրը աշխատում է ապացուցանել, որ աւստրիական զօրքերի Գալիցիայում խմբել պատերազմական բնաւորութիւն չունի «Corresp. de L'Est» լրագրի տեղեկութիւններին նայելով գորագնացի այնտեղ ուղարկելը այդպիսի առաջ տեղի չի ունենայ: Կոմս Կալնոկի, երէկ դիպլոմատներից մէկի հետ խօսելով, ասեց նրան, որ իրերի գրութիւնը այժմ աւելի խաղաղ է, և որ չը կայ ոչ մի սուր հարց, որը սպաւնար խաղաղութեանը:

ՍԻՄԲԱ, 13 մայիսի Տիբեթցիները Սիկիմում անգլիացիների վրա յարձակվելու պատճառով, այնտեղի անգլիական զօրքերի հրամանատարին, —որոնք դիմադրեցին յարձակմանը,—թողադրված է հալածել թշնամուն Տիբեթի սահմաններում:

ՊԵՏԵՐԼՈՅԴ, 14 մայիսի Տաւրիկեան փոխ-հանգապետ Բուլբուլաշ նշանակված է Տօմսի նահանգապետ Գունիսի 1-ից, Տվերի նահանգը մոցրած է աղւաւանների բանկի Մոսկվայի բաժնի շրջանի մէջ, և այդ թիւից սկսած Տվերի բաժնի գործողութիւնները դադարեցվում են: Գիւղական բանկի Սիմբիւսի բաժինը իր գործողութիւնները տարածում է և Նիժնեգորոսկի նահանգի վրա:

ՓԱՐԻՋ, 14 մայիսի Սենատը ընդունեց զինուորական օրինագիւ յօդ. 40, որը որոշում է ծաւայութեան համար 25 տարի ժամանակամիջոց, այն է 3 տարի գործող զօրքի մէջ, 6 1/2 տարի գործող զօրքի՝ պահեստի մէջ, 6 տարի հանրազօրքի մէջ, և 9 1/2 տարի հանրազօրքի պահեստի մէջ: Ֆրանսիական բանկը յայտարարում է, որ հինգհարկեր ֆրանկանոց բոլոր տոմսերը կը վերացվեն գործածութիւնից:

ՍՏԱՄԲՈՒԼՅԱ, 14 մայիսի Անցադրերի սահմանափակումներից յետոյ ի նկատի ունեն իշխաս-Լօթարիցիայից աքսորել շատ ֆրանսիական տալիներին:

ՎԻԵՆՆԱ, 14 մայիսի Հաստատում են, որ ռուսաց հացահատիկները Գերմանիայում չեն ենթարկվի նոր մաքսահարկերի:

ՊԵՏԵՐԼՈՅԴ, 15 մայիսի Այսօր Նորին Կայսերական Մեծաշնորհ թագաւորութեան օրը, ի սակիցիսի տաճարում, Բարձրագոյն պալատի բարձրատիճան անձանց և գնեւալիտետի ներկայութեամբ կատարվեց հանդիսաւոր ժամերգութիւն: Բարձրագոյն պալատում ընդունելութիւն չը կար Ներքին գործերի միջնորդ երէկ մի քանի ժամանակով գնաց Պետերբուրգից, վերապահելով միջնորդութեան նշանաւոր գործերի ընդհանուր ղեկավարութիւնը և ուղղութիւն տալով «Вѣдомостямъ» ամսագրին յայտնված է երրորդ նախա-

Типографія Канцелярії Главнач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. ваз.